

միայն՝ քիչ անդամ կրնան զողայն աւ և ի ազնուական կենաց ճամբու մը մէջ զնել։

Ուստի կամաւ ստիպելով զողայս՝ որ պարզ հայեցողական կենաց պարապին, և զանազան դիպաց մէջ աննաց ընկերական վիճակի վերաբերեալ արուեստի մը նկատմամբ ունեցած բնական բերումը չմշակելով, և փոյժ չզընելով ոչ անոնց ժամանակին և ոչ ալ յարմար պարագայից, օր ըստ օրէ եթալով անհաւատալի կերպով կը բարձմանայ դժբախտաբար այնպիսեաց թիւն, համեմատութեամբ մը՝ որով հինգ միլիոն բնակչաց մէջ երեսունէն մինչև քառասուն հազար ապուշ արզայք կը համրուին. որոնցմէ մաս մը ախտաւոր են, մաս մ'ալ սրճարաններու մէջ զուարճութեանց և խաղերու զբաղած են. կը գտնուին և այլք՝ ոք խույժութեան և քաղաքական անկարգութեանց փափառող են. որով յիշաւի կը ստուգուի իտալական քերդողահօրն Տանդէի այս խօսքս, թէ

Բախտն և բնութիւն երբ իրարու գէմ ել են. Խնչպէս ամէն սերմ՝ դուրս ցանուած իր երկրէն, Մէտքանողակ արդիւնք յառաջ կը բերեն։

Ենողաց և դաստիարակաց կրթութեան այս մասին մէջ ունեցած պակսութիւնը լեցընելու գիրք մը՝ յիշաւի ազգերնուած մէջ գեռ չէ լցու տեսած. և մեր պատանիքն իրաւամբ կրնան իրենց առաջնորդներէն այնպիսի օգտակար զործիքի մը ստացման յոյս ունենալ, թերեւս նաև պահանջել իսկ վասն զի պարտք են առաջնորդաց աւանդել անոնց իւրաքանչիւրին՝ ոչ թէ միայն ընդհանուր տեսութիւններ, այլ և յատուկ և մերձաւոր ծանօթութիւն մը իւրաքանչիւր վիճակի կենաց, ամէն մէկուն բնական բերման և ձրից համեմատ Ռւստի մենք առ այժմ գէթթ բաղմալիպիս էջերուն մէջ կը չանանք այս զգալի պակասը լեցընելու համար ստէպ ստէպ օգտակար յօդուածներ հրատարակել։

\* \* \*

## ԿԵՆԱՑ ԵՒ ՄԱՀՈՒ ԽՆԴԻՐ

### ՅԱՏԵՆԻ ՕՐԻՆԱՑ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

Ուսկից արդեօք ընդունած է իւր ծագումն օրինաւոր իշխանութիւնն, և կենաց և մահու խնդիրն որչափ հին է ժամանակաւ. — ինչ սկզբան վրայ հիմնուած է. — ինչ է անոր զիխաւոր նպատակն և մինչև ցերբ կրնայ և պիտի տեսէ: Ահաւասիկ հարցեր՝ որոց կը պատասխանենք՝ թէ գերագոյն և օրինաւոր իշխանութենէ մի և ՚ի գրական օրինաց կը ծաղի այն, և այնքան հին է ժամանակաւ՝ որքան հին է մարդկային ընկերութիւնն երկրիս վրայ, և գուցէ անոր հետ և անոր չափ ևս տեսէ:

Եթէ զառնանք մաքով յանցեալ անդր մարդկութեան, եթէ կարդանք

անոր պատմութիւնն և յիշաւակարանքը, անբացասելի կիրապով կը տեսնենք թէ ազգք և ազմիք ամենայն, քաղաքակրթեալ և բարբարոս ժողովուրդներ, ամենայն միապետական, հասարակապետական, ազնուապետական և ուամկապետական վարչութիւնք առ հասարակ և քաղաքք և գերդաստանք՝ օրինադրած և ՚ի կիր արկած են զայն յօդուած ընդհանուր ընկերութեան և առանձին անհատից։

Այժմ թողունք յանուն պատուհասի կենաց և մահու զատապարտելց վրայ եղած ծայրայեղ չափազանցութիւնքը՝ անցեալ ժամանակաց մէջ, որոնք այս-

օր ամենաւն պժգալի կը թուին, և Ժթէ զարու պէս լրսաւորութիւն և քաղաքակրթութիւն սիրով զարէն գատապարտուած, զորս մենք ես կը զատապարտենք. և անոր օրինաւոր զործազրութեան կամ ոչ զործազրութեան մասին միայն խօսինք. որուն հարցը այսօր ամէն փաստաբանից, իրաւադիտաց և գատաւորաց ուշազրութիւնը առ ինքն դրաւած է:

Դարուս սկիզբէն՝ ՚ի վեր ելան մի զինի միմեանց ընկերութեան ծոցէն գերածայրեալ հանճարներ և զգայուն սիրտեր, որոնք փորձառութեամբ և զիտութեամբ՝ յետ հարուածեց և ՚ի հիմանց կործանելոյ հինուուրց բարբարոսական սովորութիւններն և ատենական պատժոց տարտապայման զեղծմունքները, հուսկ ուրեմն մահուան պատժոյն գէմ' ևս ձայն բարձրացուցին Ասոնցմէ զրեթէ ամէնքն ալ տեսան աւելի կամ նուազ ընկերութեան ծոցը զործուած ամենօրեայ ոճրադործութեանց անլուր աղէաբը. և իրենց բարեկրթ և անմեղ քաղաքացեաց անդարմանի կորսանեան վրայ ողբարով հանգերձ՝ շտադրեցան բնաւ կարեկից ըլլալու այն աղեաից պատճառ եղո՞ւ անդութ եղեանազործաց թշուառ օրհամին վրայ, իրաւամբ պասպիսիք ոչ միայն այն շարագործներէն, ոյլ նոյն իսկ շատ իմաստուն և բարեկրթ քաղաքացիներէն բարերարք մարդկութեան կոչուեցան:

Ելան մի և նոյն ժամանակամիջնին անոնց համանման և բաղմաթիւ հանճարեղներ, որոնք ընդ հակառակն, ցաւով սրափ տեսնելով ընկերութեան այն ապաշնորհ և արիւնարբու հրէներուն ՚ի մահ գատապարտակիլը, զանոնք դուռնապէս ոզրալով հանդերձ, միշտ նախադաս համարեցան այն օրէնքն և պատուհասը՝ որ առանց ինայելու և իսպառ կը վերցընէ այն շար հօգիրը յընկերութենէն: Սոքա ես ոչ միայն ՚ի բարեկրթ քաղաքացեաց առ հաստրակ, ոյլ նոյն իսկ ոճրագործներէն անդամ յաճախ մարդարակը կոչուեցան:

Սակայն գժբազգաբար այն կրկին կուսակցութեան անձնիքն լաւ չիմացան իրարու միտքը և զմիմեանս չմեծարեցին: Առաջիններն՝ դանիքն և մարտիւս մարդկային արեան կոչեցին զվերջննս: իսկ վերջիններն՝ մարդասպաննեցին զառաջնները: Բայց իրաւ ըսելով, ոչ ասոնք ամէնքն ալ դաշիճ են ոճրագործաց, և ոչ ալ անոնք առ հստաբակ գաւադիբը մարդկային ընկերութեան: Այլ երկու կուսակցութեան արբանեկաց մէջ ես կարելի է գտնել լաւ և վատ սիրտեր, երկոքն ես կրնան ունենալ իրենց բարի կամ չար նպատակները այս մրցմանն մէջ, թւսափ մենք իրեն չէզո՞ր անձն, այն երկու հակառակամարտ կուսակցութեանց մէջ կեցած՝ կ'ուզենք անկողմանակը մաօք և ըստ կարելոյն՝ երկու կողմանց ՚ի նպաստ հ կամ հակառակող փաստերը ՚ի պատկերներկայացընել, և թողուլ ընթերցովին թէ որ կողմի նժարին մէջ ճգելու է իսր մատաց ծանրոցը, և որ կողմը հակելու է:

Նախ առաջին կուսակցութեան կամ այն իրաւադիտաց ընդուովը խօսելով, որոնք մահուան պատիքը չնչել կը ջանան, կը տեսնենք արդարե որ զօրաւոր փաստեր անոնց ՚ի նպաստ ընդ առջ կ'ելլեն, և մարդուս կենացրաւ օրինացն և գործեացը գէմ կը բողոքեն մեծաձայն:

Ա. Անիբրաւ և անվաշեր է միջտ մանուսն պատժոյ օրէկիքն. — 1. Խնչպէս տրարիի այսպէս նաև իշխան և տէր մարդկային կենաց՝ Աստուած է, նաև միայն կրնայ զայն բառնալ կամ չնորհել մարդկանց, ուրեմն մարդ մը ինչ իրաւամբ կը յանդգնի ուրիշ մարդու մը կեանքը վերցընել, որ ՚ի բնէ հաւասարապէս իրաւունք ունի ապրելու:

2. Մարդիկ ՚ի սկզբան օրինաւոր իշխանութիւն և օրէնք հաստատած ժամանակ՝ իրենց ազատութեան մի մասը զրհած են կամ աւանդ զրած հաստրակութեան, միւս մասը կամ մեծադոյնը պահելու և վայելլու համար.

իսկ ընդհակառակն այս պատժովս ոչ  
միայն բովանդակ իւր աղաստոթիւնն  
և վայելքն, այլ նոյն իսկ իւր կեանքն  
կը կորսուի այն իշխանութեան և օրի-  
նաց ձեռքով:

Բ. Անձրաժեկտ հարկ մը չէ մա-  
հուան պատիճը, և անոր չկատարուե-  
լովն ոչ արդարութիւն, ոչ բարյա-  
կան և ոչ ալ ընկերական կեանքը  
կը խանգարի:

1. Պատուհասին և զայն հաստատող  
օրինաց զիմաւոր նպատակն է կան-  
խաւ պաշտպանել թէ առանձնակա-  
նաց և թէ ամրող ընկերութեան կեն-  
ական և ստայական իրուունքները,  
և եթէ յափշտակուած են՝ յետո զար-  
ձնել իրենց բուն ստացողներուն, առ  
որս իրն կը բողոքէ: Արդ մարդա-  
սպանութեան ոճիրն կատարուելն յե-  
տոյ, ինչպէս կարելի է, մանաւանդ  
թէ յուսահատ ճիգ մի է և անիրաւ  
ուզել գարմանել զայն. որովհետեւ այս  
պարագայիս մէջ բունսբարուած ստա-  
ցուածքն՝ կեանքն է, և անոր ստացողն  
և վրան իրաւունք ունեցողնէ սպանուո-  
ղըն: Ուրեմն ինչպէս կարելի է կեան-  
քը ետ դարձընել երբ մեր ձեռքը չէ.  
որուն գարձընել և ինչ իրաւամբ՝ քա-  
նի որ անոր տէրը մեռած է և ուրիշն  
ստանալու իրաւունք չունի:

2. Անկարելի է այն կորուսոր դար-  
մանել, առանց ուրիշի մը իրաւունքը  
յափշտակելու և տունը քանդելու. ու-  
րեմն արդէն կատարուած մարդասպա-  
նութեան ոճիրը քաւելուզելն՝ որ մար-  
դասպանութիւն մը գործել է, և չար  
միջնորդաւ մը՝ վախճանազուրի բարի-  
քի մը հասնի ուզել է, որ բոլորովին  
օտար է և արտաքոյ օրինաց և արդա-  
րութեան սահմանին:

Գ. Մանուշան պատիճն օգտակար  
չէ ընկերութեան. — Օրինաց վախճանն  
է այս պատժովս վախցնել զշարա-  
գործս, ետ կեցընել յոնքադորդու-  
թենէ և ընկերութեան սիրոն՝ իր բա-  
րին ուզել. սակայն մահուան պատի-  
ճըն այս երեք տեսութեամբ ևս ան-  
օգուտ է և վնասակար:

4. Զարագործները վախցընելու հա-  
մար՝ պէտք է որ այն պատժոյն գործա-  
դրու միւն ըլլայ հրապարակական և  
'ի իւրատ ոյլոց բայց իրաք ոյնպէս չէ.  
վասն զի կամ ծածուկ կը կատարուի  
և քիչ անձնիք կը տեսնեն, և կամ  
հրապարակական ըլլալով ժողովուրդը  
կրթուելու տեղ՝ արիւնհեղութեան կը  
վարժի:

2. Նքա քանի որ չէին տեսած ոճրա-  
գործին եղերական մահը՝ աւելի տու-  
կալի բան կը կարծէին զմահ, և քաղցր  
զկեանս, բայց երբ կը տեսնեն երբեմն  
յուսահատ զտատպարտելցն աներ-  
կիւղ՝ ի մահ ընթանալն և աչք բանալ  
զոյելու պէս կատարուիլն, այնուհետեւ  
բանի տեղ չեն զներ բոլոր այս սպառ-  
նալիները, դաշիճն և գործիները:

3. Այն արարածներն՝ զրոս մենք օ-  
րինաց և արգարութեան գործակա-  
տարներ կը համարինք, այսինքն է դա-  
հիճներն, ով կրնայ երաշխաւորել թէ  
առաջ ինչ զգացմամբ որ ակսան իրենց  
ընթացքը նոյնպէս ալ պիտի շարունա-  
կեն: Այս որ: Ժամանակին յառաջելով՝  
կը սկսին կամաց կամաց ընդելանալ  
այն անդուիթ և արիւնաշողախ տեսա-  
րանին, կը կորանցընեն իւրեանց քա-  
ղաքացիութեան ամենափափուկ զգաց-  
մունքները. իրենց կենաց ժամերն, օ-  
րեն և տարիներն ամրոջապէս կ'ան-  
ցընեն իւրեանց նմանեաց արեամբն և  
ցաւագին հառաջանքները լսելով զը-  
ւարձանալու, Ռ'հ, նոյներն թուզով ըլլ-  
քագունք, ընտանիքն և զմարդկային  
ընկերութիւնը՝ խաւարային և խոնաւ  
զնդաններու մէջ կը թափախին բուր-  
ճակներու և զիջիկանց նման, զիշեր ցո-  
րեկ մարդկութեան և անոր թշուառ  
անհատից կեանքն ողբալու և մահը  
գուժելու: Գուցէ շափազանցութիւնք  
երեկին այս բաներս, սակայն պատմու-  
թիւնն քանի քանի ճշգրիտ օրինակներ  
չի ընդայեր մեզի այսպիսի արարինակ  
և վայրագ փոփոխութեամն. ով կրնայ  
ժխտել. բացէք վկայաբանութիւնները  
և զարեգիրս ազդաց, և յայտնապէս  
կը տեսնէք զանոնք: Արգարի մահուան

գատապարտութեան պաշտպանն ան-  
գամ Յովսէկի Տը Մէսղը՝ իւր Ս. Բէ-  
տրդպորքի Երեկոյնեկուն մէջ մարդ-  
կութենէ դուրս արարածներ կը նկա-  
րագրէ զանոնք, որոնք ոճրագործաց  
սահմաններուն մէջ կը թափառին քա-  
րոնդներու նման :

4. Այն եղեռնագործն՝ որոյ մա-  
հուան վճիռն հնչած և ինքն արդէն  
կեանքէն յուսահատած՝ կեցցէ՛ մահ  
գոյելով կը դիմէ առ սատակիցը, կար-  
ծէք թէ օգտակար պիտի ըլլայ բն-  
կերութեան . ոչ, ոչ երբէք : Նա՝ եթէ  
ոչընչական համարիք, եթէ ընկերագա-  
րական և եթէ այլ ինչ կուսակցու-  
թեան արբսնեակ, ունի բազմաթիւ  
ընկերակիցս իւր և համախոհս, որոնք  
տեսնելով անոր անվախութիւնը՝ մար-  
տիրոս պիտի համարին իւր առսելու-  
թեանը մէջ, և պիտի զրգուուին ևս քան  
զես բանալ չարութեան գրօշն և ընկե-  
րութեան վտանգ սպառնալ : Այսպէս  
ուրեմն նա իւր մահուամբն փոխանակ  
քաղովքացեաց աղետից յառաջն առնե-  
լու նորանոր աղէաններ իւր ետևէն կըր-  
նայ յարուցաննել :

5. Որչափ որ մարդիկ բնութեամբ  
զոնրագործութիւնը կ'ատեն՝ նոյնչափ  
ևս կեանքը կը յարգեն . ուստի ինչպի-  
սի մեծագոյն կարեկցութիւն պիտի  
շզույ հասարակութիւնն իւր պին թը-  
շուառ նմանեաց վրայ, երբ տեսնէ զա-  
նոնք կորացեալ, մահուան դուռը հա-  
սած և իրեն ապաւինած : Այս, այն  
տիտոր տեսարանին հանդիսակից ե-  
ղող հասարակութիւնն այնուհետեւ  
պժգուով և ատելութեամբ պիտի նա-  
յի գահնի վրայ, իրու ՚ի վերայ վաղեր,  
որ ըստ ինքեան ընկերութեան կամոց  
պարզ գործադիր մ'ոչ . պիտի գարշի  
մերժի պատկանելի ծերակուտէն, գա-  
աւարներէն և իշխանէն որք կը զուար-  
ճանան անոր թշուառ վիճակին վր-  
այ, և վրէժինդրութեան հոգուով լը-  
ցուած կը փութացընեն զայն դէպ ՚ի  
զենուամ :

Դ. Մահուան պատիժն յանցան-  
քին համեմատական չէ քնար . —

1. Որովհէետև նա որ անձ մը միայն  
սպաննած է, և ուրիշ մը որ տասն մար-  
դու արիւնը մտած՝ հաւասարապէս  
պիտի մեռնին . նա որ յանկարծական  
այլայլութեամբ մը բռնկած, և ուրիշ մը  
որ երկար հնարագիտութեամբ և պաղ-  
արեամբ սպաննեց՝ մի և նոյն պատիժը  
պիտի քաշեն . նա որ անարգական առի-  
թէ մը շարժած և ուրիշ մը որ ըստ ին-  
քեան աղնուական պատճառաւ սպան-  
նեց իւր սոսիլը, նոյն պատուհասը պի-  
տի կրեն : Այսպէս ըսելու ենք նաև  
հայրենեաց մատնչին և օրինաւոր իշ-  
խանին կենաց գաւաճանին, և ուրիշ  
քրէական յանցուորին համար :

2. Բաղդատութիւնն չկայ ամեննեին  
սպանուողին կրած ցաւոց և տաղնա-  
պին և յետոյ դատապարտելցն կրած  
տաղնապին մէջ : Առաջինն ոճրագործ  
դաւաճանին հարուածին զոհ ըլլալէն  
վայրկեան մ'առաջ՝ բոլորովին անկաս-  
կած էր, և յանկարծակի կորանցուց իւր  
կեանքը : Իսկ երկրորդն՝ ընդհակառա-  
կըն, սոսկալի ասպնապներ և մահա-  
բեր ժամեր կը կրէ՛ ի ներքուստ՝ իւր մա-  
հուանէն առաջ և գատավճիռը լսած  
ժամանակ : Դատաւորը ծածկելով իւր  
այլայլութիւնը՝ լրջօրէն պիտի որոտայ,  
և անոր արդէն կորացեալ զլիսուն վե-  
րոյ բիւր շանմեր պիտի թափէ հետե-  
ւեալ խօսքով . Ուշ գիր արդարութեան  
ձայնին, ով մարզասպան . ինչպէս որ  
գու ամէն հնարք բանեցուցիր գու որ-  
սրդ անվիրէպ ձեռք բերելու համար,  
այսպէս ևս մենք զքեզ ձեռք բերելու  
ամենայն հնարք ՚ի գործ գրած ենք :  
Թերիս քու որսդ յոյս ունենար ազատե-  
լու, և գու քու գաւադրութեանդ յա-  
շողութեանը վերայ կասկածէիր . իսկ  
մենք ընդհակառակն ամեննեին չենք  
կասկածիր, և գու բնաւ վերաստին ազա-  
տութեան յոյս մի ունենար : Ինչպէս  
գու առանց ՚ի գութ շարժելու եղբօրդ  
թշուառ ողբոցը վերայ, պաղ արեամբ  
և անինայ զոհեցիր քու կրիցդ, այսպէս  
ալ մենք առանց կարեկցելու քու ձայ-  
նիք՝ զքեզ զոհ պիտի ընենք արդարու-  
թեան և ընկերութեան, առ որս յան-

յաւոր գտնուեցար. Քու զիմատմանդ  
ժամանակին և գործիները որոշուած են:  
Գիտցած ըլլաս՝ որ փաղը այս ինչ ժա-  
մուն, այն ինչ վայրիկենին՝ քու կենացդ  
յետին զանդակին հնչելուն պէս՝ պատ-  
րաստ պիտի գտնուին սատակին գի-  
մաց. տապարը պիտի վերանայ և պա-  
րանցիդ վերայ պիտի ինկնայ:

Սպուգին այս խօսքերուն հիւրաքան-  
չիւրն երկասյրի սորէ մ'աւելի կը շո-  
զայ անոր երեակայութեանը մէջ և  
կարեվէր կը խոցոտէ դառապարտել-  
ւոյն սիրտը . և պատմութիւնն շատ օ-  
րինակներ մէջ կը բերէ , որոնք գար-  
նանազուարճ երիտասարդութենէն՝  
յանկարծ 'ի մեռելատիպ յալիս ծերու-  
թեան փոխեցան , անհնարին ցաւոց  
տագնապայից խորչակէն զարնուած :

Ե. Մանուշան պատիժն անդարձման  
ենի է. — 4. Որքան և գարուս յառա-  
ջողիմութիւնն զարման և միջոցներ  
գտած է ամբաստաննելոց հարցուփորձի  
մասին, որքան և երկար և մանրազնին  
հետազոտութիւնք ապահով միջոցներ  
կը համարուին զանմեցութիւնն յայտ-  
նելու, ասկայն գատաւորք անգամ կը  
խոսուովանին թէ յաճախ կը զրիպին,  
վասն զի մարդկի են և անխմտական  
չեն։ Արդարեւ հարիւրաւոր զարուց  
պատմութիւնն ինքնին՝ քանի քանի  
անմեղութեան զոհերու սրտաճմիկ օ-  
րինակներ չի մատակարարեր մեզի.  
որչափ Սոլյարաններու, Պղատոններու,  
Միլտիադէսներու և ուրիշ առաքի-  
նեաց բազմութիւնք՝ մինչև յայսօր այս  
պատմուհամին զոհ եղան, և իրենց ըն-  
տանիքն և հայրենիքը սուզի մէջ ձգե-  
ցին, որնք իրաւունք ունեին դեռ շատ  
տարիներ ապրելու և շատ բարիք ընել  
ընկերութեան։

2. կրնաք երևակայել թէ ողբան  
գեռ աւելի պիտի ըլլայ անմեղաց տա-  
րապարտ կորուստն՝ եթէ յանցաւորին  
հակառակ փաստաբանից ճարտար  
հնարքներն և դատաւորաց ատելու-  
թիւնն ևս 'ի նկատի առնունք։ Ենթա-  
դրեցեք թէ ամբաստաննելցն փաստա-  
բանն համ ամենաճարտար մէկն է, և

կամ իւր դատին իրաւունքը պաշտպանելու անկորող մէկն. ենթագրեցէք դարձեալ, թէ եղեռնագործոթիւնն յայտնի չէ, վկաներ չկան, և բոլոր դատավիճակն անսունցմէ կը կախուի. Արդ առաջին պարագային մէջ եթէ քաջահմուտ փաստաբանն՝ ամբաստանելոյն պաշտպանն է, իւր ճարտար գրչովը պիտի յուղէ դառնաւորաց սիրտն և ոճագործը ազատէ. իսկ եթէ հակառակ՝ նյոյնաէս դատաւորաց կիրքն և ատելութիւնը գրգուելով կարող է անմիջն անդամ ՚ի մահ դատապարտել տալ. Ահաւասիկ երկու պարագայից մէջ ևս ոչ ճշմարտութիւնը յայտնաւած կը լինի և ոչ իսկ ալ արդարութիւնն տեղը գնացած, այլ նոր զոյն մը վերայ աւելցուած: Ըստ հակառակին եթէ փոխանուկ մահուան պատժին, մշտնչենաւոր աշխատութեան կամ աքսորի դատապարտուած ըլլար ամբաստանեալն կարելի էր տարիներ անցնելէն յետոյ՝ անմեղութիւնն և օճիքն յայտնաւեին, և երկուստեք իրենց հատուցումն ընդունեին:

Զ. Մանուշակն պատփեն կամ ամենէնէն դժևնակն է և կամ ոչ . . . 1. Արդեմ է ստուգիւ ամենէն զժնդակն է՝ պէտք չէ՞ ի կիր արկանել զայն ոճրացործին դէմ. պատփենէն, որք ընկերութեան կամաց արտայայտութիւնք են, միայն ընկերութեան ներկայ բարին պահելու և ապագայ չարը արգելելու համար պիտի ծառայեն, կ'ըսեն Պղաստոն, Սեննէկա և կիրկերոն, և ոչ թէ անցած ոճիրը քաւելու կամ արգարութեան վրէմն հանելու համար, իսկ որովհետեւ նոյն իսկ արգարութիւնն և օրէնք կը թելազրեն թէ երկու պատփենէն զայն ՚ի գործ զնելու է՝ որ յանդաւրին նպաստող է, և բաւական է ընկերութեան բարին պահել և չարը արգելել, ուրեմն մշտնինաւոր բանափի և աքսորի պատփեն՝ բաւական են առայս և մահուան պատփը վերցընելու է:

2. Եթէ մահուան պատիմն մեղմ է,  
քան զվերոյիշեալներն,և նոյն ազդե-

ցութիւնն չունի, այն ժամանակ ան-  
օգուտ տեղ և 'ի մեծ վլսա առանձնա-  
կանաց կը ջանանք այն միջոցն 'ի կիր  
արկանել, մինչդեռ անկէ աւելի աղ-  
դու և օգտակար միջոցներ պատրաստ  
կան, առանց անոր վնասներն ունենա-  
լու:

3. Մահուան պատիմն ևս կամայա-  
կան է և ընկերութեան հետ սերտիւ  
կապուած. ուրեմն մարդկութեան բա-  
րոյական և քաղաքական վիճակին փո-  
փոխելուն համեմատ՝ պէտք են փոփո-  
խութիւն կրել նաև անոնց բարքն և  
վարքը կառավարող օրէնքներն և պա-  
տիմներն. « Աւելի ահարկու և խիստ  
պէտք էին ըլլալ և եղան բարբարիկ և  
բարբարոսութենէ այն ինչ ելած աղ-  
դաց պատիմներն անոնց վրայ տպաւո-  
րութիւն ընելու համար, կ'ըսէ Պէքա-  
րիա, ինչպէս շանթաձիգ կայծակ մը  
պէտք է հարուածելու այն կատաղի ա-  
ռիւծը՝ որ հրացանի հարուածը կ'ար-  
համարհէ » : Իսկ որովհեակ այժմ ժողո-

վուրդն քաղաքակրթուելով՝ անոնց ըդ-  
գացմունքներն և սիրուն ևս փափկա-  
ցած են, ուրեմն անոնց զգացման հա-  
մաձայն պատիմներն ևս պէտք են մեղ-  
մանալ, եթէ կ'ուզենք որ օգտակար և  
համեմատական ըլլան :

4. Ազատութեան և հայրենասիրու-  
թեան հոգին այսօր ընդհանուր տի-  
րած ըլլալով, մարդկի շատ աւելի զառն  
բան կը համարին զանոնք կորմնցընելը՝  
քան թէ իրենց կեանքը: Ուրեմն եթէ  
կ'ուզենք մարդկային չարեաց գէմ զը-  
նել՝ պէտք ենք մշտնշնաւոր աշխա-  
տութեան կամ բանափ պատիմը հաս-  
տատել քան մահուն :

Ահաւասիկ մահուան պաաժոյն գէմ  
ելած զօրաւոր փաստերու ձայնն. թո-  
ղոնք որ անոնք իրենց բնական աղ-  
դեցութեամբը խօսին. մենք ասոնց  
հակառակ կուսակցութեան փաստե-  
րով՝ պիսի խօսինք ուրիշ անգամ՝ յօ-  
դուածիս շարունակութեան մէջ:

Կը շարունակուի:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԻՆԵՐ ՌՈՒՍՅԱ

Ամէն արեղայ  
Զի լինիր արբարտ:  
  
Բատրկէն շատ վեր՝  
Զայդ մը սըրտեց սէր:  
  
Ասեղին ճամբան  
Կը բըռնէ գերման:  
  
Կը սիրէ ինչպէս  
Գայլն ըզդառնուկ գեղ:  
  
Գառն և անոր ամէն բան,  
Որուն լեզի և բերան:

Անժագուհի մեղուներ,  
Իրենց փեթակն է աւեր:  
  
Իրեն երդիքն է փըլփըլիած,  
Ինքն այլոց գոռու կը դոցէ բաց:  
  
Ուրիշն ձեռքն եղած պատառ,  
Կ'երսի մեծ, գէր ու կայտառ.  
Իսկ ուրիշն ուսերուն իբո՞՝  
Մանրիկ, Փոքրիկ, Թեթև քարեր:  
  
Գըտաօր բարեկամ, պաշտօն մ'ըստացար,  
Իսկ թէ թըշնամի գերեզմանաքար: